


Ա. ԿՈՒՐՏԻԿՅԱՆ

ԱԹԵԱԼ ԱՐԴՏԱԵՐՊԻՄ



891-99
4-99

ԹԵՏՐԱՆ
-1935-
ՅԵՐԵԿԱՆ

25 NOV 2010
6 NOV 2011

Ա. Կոյրտեկսն

891.99
4-99 մի

ԱԼԳՅԱՆ ԱՐՈՏՆԵՐՈՒՄ

34835



Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ
1935

29.05.2013

36707

Պատ. Խերազիր՝ գ. ԱշԱՆՅԱՆ
Տեխ. Խմբ.՝ Գ. ԶԵՆՅԱՆ
Սրբազրիչ՝ Ա. ՔԱՂԱՇՅԱՆ



Դրսում խավարը ձեղքում և առաջ և շարժում լապտերի աղոտ լույսը:

Ներսում կովերը խաղաղորեն ծամում են ծաղիկներով հարուստ խորը: Գոմը տաք է, մաքուր և հաճելի: Դրա համար ե, վոր գիշերային հերթապահն անդուսպ ցանկություն և զգում քնել խոտի վրա, քնել խորը: Նա մոտենում է «զվեզդուշկային»՝ Շագարդայի Փերմայի աստղին, ձեռքով շոյում և նրա ձակառը, քթի տակից մրթմբթում և խանդաղանքի ու սիրո խոսքեր, ապա սապոկի կողքով մի թեթև շարժումով աղբուղու մեջ և քշում նրա յերկար պոչի տակ նոր ընկած աղբն ու հեռում:

Անհրաժեշտ է հաղթահարել մնշող քաղցր քունը: Զե՞ վոր պետք է արթուն մնայ՝ նշանակված պոստում: Զե՞ վոր, վերջապես, Փերմայի վարիչը հակառակ ուշ ժամանակին,

Հանձնված ե արտադրության 13 մարտի 1935 թ.
Ստորագրված ե տպագրելու 20 մարտի 1935 թ.

Գլավիտ 106 հրամ. 3279 պատվեր 294 տիրամ 3000

Պետհրատի տպարան, Յերևան Ա Դնունի 4

ըստ իր սովորության, ուր վոր և կարող ե
հայտնվել գոմում, ստուգել պոստը, դրու-
թյունը:

— Լադուշը քուն չունի, — շատ ճիշտ են
ասում Շագարդայի բնակիչները. — մտածում
ենա: Լադուշը գիշեր-ցերեկ հետեւում ե Փեր-
մայի ամեն մի աշխատակցի ամեն մի քայլին:
Յ տարվա ընթացքում չի պատահել մի որ,
վոր Շագարդայի բնակիչներից մեկն «առավո-
տյան» լադուշից առաջ վերկացած լինի:

Նա դուրս ե գալիս գոմից՝ քունը վանելու
համար: Լուսաստղը թագնվել ե սև ամպերի
հետեւում: Ղարախաչի ձյունապատ լեռներից
փչում ե սառը քամին: Լսվում ե հեռավոր
գտաթների խռով յերգը:

Ծնարանից դեպի գոմը հետզհետե մոտե-
նում ե լապտերի կարմիր լույսը:

Հերթապահ— հարվածային անասնապահ՝
Գարեգին Զաւրաբյանը— մթության մեջ ճա-
նաչում ե Փերմայի վարիչ՝ Լադուշ Բոլշինյա-
նին.

2

Մի կով բառաջում ե: Բառաջում ե աղիո-
ղորմ, յերկունքի մեջ: Սակայն վոչ վոք չկա-
կովի ծինն ընդունելու համար: Նա ճանաչեց
«Զվեզդուշկային» ճանաչեց բառաչից: Զայ-
նացավ: Յեկ յերբ աչքերը բաց արեց, տեսավ,
վոր իր սենյակում սեղանի մոտ տարածվում

եր լամպի ներս քաշած պատրույգից դժգույն
լույսը. ժամացույցը ցույց եր տալիս ժամի
չորսը:

Լադուշը յերազից հետո նորից չքննեց: Վեռ
կացավ, հագնվեց և ուղղակի գնաց ծնարան:

Ծնարանի սանիտար՝ Գարեգին Համբա-
րյանն արդեն ընդունել եր յերկրորդ ծինը:
Արդեն հորթերի մեջ, տախտակամածի փա-
փուկ խոտերի վրա պառկել եյին յերկու ա-
ռողջ, սպիտակամակատ հորթեր ևս:

Լադուշը դիտեց այդ հորթերին, չոյեց
նրանց ճակատը, ապա ժպտաց: Ժպտաց նախ
հաջող ծնի, առողջ ե կայտառ հորթերի և ա-
պա իր չար յերազի վրա:


Նա նայեց ծնարանում պատից կախված
ջերմաչափի կապույտ իրանին, զննեց սնդիկն
բարձրության կետը: Հետո, ուղղեց կաթի ըն-
դունման սեղանի վրայի սպիտակ սփոռց, ու
ծաղկամանը:

— Մալադ'յոց, Գարեգին— ասաց նա ու
դուրս յեկավ դեպի գոմերը:

«Գարեգնի մասին չար յերազ տեսնելը
ճանցանք ե», մտածեց Լադուշը, հպարտանա-
լով իր Գարեգինով և իր որինակելի ծնարա-
նով:

Զե՞ վոր Գարեգինը 300 ծին եր ընդունել
առանց մի կորուստի:

Լաղուչը կանգ առավ «զիեզդուշիմյի» մոտ և ձեռքով կամաց խփեց նրա փափուկ տեղին: «Զվեզդուշիմյան» համբորեն, վորոճալով դուխը թեքեց և նկատեց Լաղուշին: Յեթե կադուխը թեքեց և նկատեց Լաղուշին: Յեթե կադուխը նա չնորհակալություն կհայտներ Եր



Լաղուչ Բախչինյան «Սատին Շահումյան» կոլոստեսության
ֆերմայի վարիչ

պիճակից՝ մաքուր և տաք գոմից, իուշու և
համեղ կերից:

Ապա՝ Լաղուչը դիտեց «Լիզկային», «Ա-

նուշին», «Կավալին», ամբողջ մաքուր գոմը,
Հերթապահին զգուշացրեց, վոր կովերի կերը
Ճիշտ ժամանակին տրվի, մի քանի բոպե լսեց
նրա ընդհանուր աշխատանքային և անձնական
կարիքների մասին, քաջալերեց նրան և գուրս
յեկավ գոմից:

Նորից լապտերի լույսը հետզետե փոքր
քացավ և հալվեց խավարի մեջ:

Այսպես եր անցնում Լաղուշի դիշերային
առորյան...

Մենք առաջ ենք գնում յերփներանգ ծաղկիների, Շագարդայի փարթամ խոտհարքների միջով: Այստեղ գեռ չի աշխատել խոտհար
մեքենայի սուր, փայլվլուն դանակը, խոտհարքները գեռ չեն լսել յերկաթի ուրախ, զրորյնգուն յերգը: Այսոր կանգ ե առել ալպյան
այս կանաչ մարդերի դուրսեկան հովը, Թրուչունները չոգից թագնվել են հասկերի մեջ ու
յերազում են՝ անսահման ծաղկադաշտը. Հուզող,
ալիքող յերեկոյան զեփյուռը: Հատ ու
կենտ մնացած մի քանի մանկչակագույն լալազարներ իրենց բաժակները կախել են գըլ՝
խիկոր ու լսում են հողի բերբիության գաղտնիքները: Զրի կարոտ մի քանի կակաչներ կիպիչ արևի տակ սկսել են թուլանալ՝ թոշնել:
Միայն ծղրիտներն են, վոր աշխատորեն շաբունակում են իրենց համերգը:

Սարալանջին հանդիպում ենք մի խումբ
Հորթերի, վորոնց հետեւում ե սանիտարի մա-
քուր, սպիտակ արտահագուստը հադին մի
Հորթապահ։ Նա նախրից և մյուս Հորթերից
հեռու ինամում ե հիվանդ Հորթերի այս փոք-
րիկ խումբը։

Սարալանջի ավելի թեք մասում, վորտեղ
մարդերի կանաչն ավելի յե բարձրացել, մենք
հանդիպում ենք առողջ, կայտառ Հորթերի,
վորոնք ախորժակով արածում են, ուտում,
կշտանում ու պոչները տնկած, փափուկ կանա-
չի վրա, պատանեկական վոստումներ են կա-
տարում։ Այս Հորթերին՝ բարեխիղճ կերպով
խնամում ե՝ Ամմվել Յեղիազարյանը։

— Սամվելը գովասանքի արժանի յե, —
նկատում ե ֆերմայի վարիչ ընկեր Լադուշը։
Յերբ յեղանակը լավ ե լինում նա լուսադեմից
առաջ, գիշերվա ժամը յերեքին, ուրախ շվշւ-
վացնելով Հորթերն արածացնելու յե տա-
նում, — ավելացնում ե նա։

— Կես գիշերին սարից, վոր շվշվոցը գա-
լիս ա, իմանում ենք, վոր մեր Սամվելն ա, —
գովարանում են մյուսները։

— Մի քիչ զարմաղալ անող ե, — մեջ ե
մտնում մի կթվոր, — թեև գիշերցերեկ Հոր-
թերի միջից դուրս չի դալիս, գիշերը լապտե-
րը ձեռքին Հորթերի տակը մաքրում, սան-
րում ե, բայց վայ նրան, վոր նրա Հորթին սր-
իալմամբ մի մսխալ պակաս կաթ ե տալիս . . .

— Զատո, նրա Հորթերն ամենալարձր աճն
էն տվել, — մեջ ե մտնում Լադուշը, — «Բացա-
նը» մեկ տարեկան ե և կշռում ե 275 կիլո, 9
ամսական «Ելքան» կշռում ե 245 կիլո — հաշ-
վիր ե՛, ամեն մինը մի յեզան չափ . . .

Սակայն, Ստեփանավանի ամբողջ շրջանում
ուեկորդային աճ տվեց «Լորդ» ցուլիկը, վորն
որեկան ավելացավ 1 կիլո 350 գրամ և 8 ամ-
սական հասակում, կշռում եր 280 կիլո։

Շագարդան վոչ միայն պետք ե պարծենա
իր «Լորդ»-ի», այլև առանձնահատում ի խնամք
ապահովի ապագայի այդ Հորթերտ ցուլի նը-
կատմամբ։


5

Զանդի ուժեղ զողանջները տարածվում են
մինչև հեռավոր արոտավայրերը։ Տրվում ե
սուաջին աղդանշանը։ Զանդը կանչում ե նախ-
րին՝ ժամը 6-ին կիթն սկսելու համար։

Հեռվում՝ Ղարախաչի լեռների ձյունա-
պատ բարձունքների թիկունքում, կտպույտ
յերկնակամարում, սպիտակ ամպերի մի վետ-
վետուն կարավան սահում ե առաջ՝ ինչպես
չվող ձյունակերտ սագերի մի յերամ, ինչպես
սպիտակաբաշ արշավող ալիքներն անսահման
կապույտ ովկիանսուում։

Գետափից մինչև գոմերը մեր առաջ ձրդ-
վում ե մաքուր, հաղթանդամ կովերի նախի-
քը, սպիտակավուն սեմենտալներն ու, մուգ
շականակագույն շվիցները։

Սկսվում է կթի ժամը: Կթվորները ըլա-
հում են իրենց ձեռքերը, առանձին թաշկինա-
կով կթից առաջ մաքրում են կովի կուրծքը,
պտուկները, մի քանի կաթիլ կթում են գե-



«Սատլին—Շահումյան» կոլտնտփերմալի հարվ. Հոբթաղան
Գարեգին Համբարյան

տին՝ պտուկի անցքերը մաքրելու համար: Ա-
պա դուրեկան Փշչոցով գոմում սկսվում է կի-
թը:

Եթ սեղանի առաջ նստել և ըրիդադիրը և
ընդունում է կթված կաթը: Այդ սեղանը փայ-
լում է մաքրությունից՝ ինչպիս կաթի դուլլե-
րը: Սեղանի մոտ՝ ծաղկամանների մեջ, կան
յերմիներանդ ծաղիկները: Ընդունողը հաղել է
մաքրուր սպիտակ արտապուստ: Նա կաթնա-
չափով առանձին կշռում է ամեն մի կովի
կաթնատվությունը և զրանցում:

Ֆերմայի վարիչ՝ Լաղուջը մեծ զոհումա-
կությամբ զիտում է այդ բոլորը: Զե՞ վոր նու
համառ աշխատել է մաքրություն, ճշտապա-
հության, զոսունմինիմումի համար, կուլտո-
րական անասնապահության համար:

6

Կոլտնտեսական շարժումն ակտիվացրեց
միլիոնավոր հետամնաց, անգրագետ գյուղա-
ցիների, զե՞ն շպրտեց գյուղական կյանքի
մղձավանջային իդեոտիպմը, զյուղական
կյանքի մեջ մտցրեց մի նոր հորովել:

Դրա համար ե, վոր յերբ մթությունը
մաղվում ու անդորրը տիրում ե սարալանջում՝
ու ֆերմայում դադարում է կովերի բառաչը՝
Շագարդայի ֆերմայի անասնապահները չե՞ն
հավաքվում րինայի մեջ, ծալապատիկ չեն
նստում խարույկի չուրջը՝ տեսած ու լսած
արկածները պատմելու, կամ աշուղ Գիքոյի
սիրո հեքիաթները լսելու համար:

Նրանք հավաքվում են ֆերմայի գեղեցիկ
ակումբում, հստում են աթոնների վրա ու

սովորում են զոռակելինիկա, սովորում են լենինիզմ, կարդում են՝ թերթեր:

Նրանք ակումբի բեմն արգեն պատրաստել են ներկայացումներ տալու համար...

Նրանք քննադատում են վարչությանը, վոր շվից ցեղի ցուլ ձեռք չի բերում և շվից ցեղի կովերը թույլ ե տալիս, վոր բեղմնավորվեն սեմենտալ ցեղի ցուլերով:

Խոսում ե քննադատում և կինը, առաջքաշված բրիգադիր՝ Նատաշա Կլիմովան:

«Տավարածն ու չորանն անտուն-անտերմարդիկ են: Նրանք գյուղի ամենահետին մարդիկն են: Այսպես ելին գնահատում տավարածին և չորանին, հին, մենատնտեսային գյուղում»:

Այժմ բոլորովին այլ ե: Այժմ, կոլտնտեսական գյուղի անասնապահը՝ նվաճում և կուտուրական—ունեվոր կյանքը:

Այժմ Շագարդայում չկան կուլակներ՝ Ավետիք և Միշա Բարաջանյանները: Կոլտնտեսական հեղեղն ալպյան այս հրաշալի, այս փարթամ սարալանջերից քշել տարել ե շահագործող մարդուն:

Այժմ կուլակային ստրկության ու շահագործման Շագարդան չկա:

Այժմ կա նոր Շագարդան՝ Ստեփանավանի «Ստալին-Շահումյան» կոլտնտեսության սոցիալիստական ֆերման:

7

Ամբիոնի վրա յէ պարթևահասակ, խըրովստ ու առնական Մացակը, «Ստալին-Շահումյան» կոլտնտեսության նախագահը:

Իլին ու Ստալինը պատից նայում են հավաքված կոլտնտեսականներին:

Ստեփանավանի շրջործկոմի դահլիճում հնչում ե կոլտնտեսական հաղթանակի հիմնը: Բերքի բաշխման տոնն ե:

Այսոր առանձնապես ուժեղ և հնչում Մացակի ձայնը:


Այսոր, այդ ձայնի մեջ առանձնապես ուժեղ է զգացվում ունեոր ու յերջանիկ կյանքը՝ նըղածող կոլտնտեսական մասսաների բարձրակոչ ու հաղթական յերթը...

Ահա՝ հարվածային անասնապահ՝ Դավիթյան Գարիկը: Նա աղնիվ ու անձնվեր աշխատանքով արդեն դարձել ե ունեոր: Նա իր 820 աշխորի փոխարեն ստացալ՝ 2540 կիլո հացահատիկ, 3850 կիլո կարտոֆիլ, 74 կիլո յուղ, 148 կիլո պանիր, 7400 կիլո կեր, 2460 կիլո ձակնդեղ:

Ահա մի ուրիշ անասնապահ՝ Զուրաբյան Գարեգինը: Նա 533 աշխորի գիմաց ստացավ 1660 կիլո հացահատիկ, 2550 կիլո կարտոֆիլ, 48 կիլո յուղ, 96 կիլո պանիր, 4800 կիլո կեր, 1599 կիլո ձակնդեղ:

Այս չոր թվերից հրձվում ե կոլտնտեսության կուսկոմի քարտուղար՝ Դրեբալլը:

Ալպյան այս կանաչ սարալանջերում այժմ յերջանիկ ե տավարածը, յերջանիկ ե կոլտնտեսական կինը՝ կովկիթն ու բրիդագերը:
Դրա համար Շագարդայում աշխատան-



«Ստալին Շահումյան» կոլտնտեսության
նախադահանձնացակի Մացակ Պառյան

քային զանդի հզոր ու տիրական զողանքները
կարծես անհուն բերկրանքից թրթուալով են
տարածվում հեռավոր արոտավայրերը. գրա
համար հորթապահ՝ Ասմվելի գիշերային

շվեվոցի մեջ զգացվում ե կոլտնտեսական յերջանկության ձայնը: Դրա համար աշխատանքային այնքա՞ն յեռանդ կա Լադուշի հոգում, այնքա՞ն յերջանկություն, վոր գարնան վարար գետերի նման հորդում ե նրա հոգու ափերից դուրս....:

Մի նոր, յերջանիկ, համայնական կյանք ե կերտվում ալպյան այս հեռավոր լանջերում, տճում ու բարձրանում ե նոր մարդը, նոր մարտերի համար, բարձրանում ե այնքան վառու հզոր, ինչպես Լոռվա այս սեղ լեռների արևածագը՝ հեռավոր գագաթների թիկունքից:



Ֆերմանի վարդը

Կապուտակ Սելվանից մի քիչ բարձր, բը-
նության այս գեղեցիկ անկյունում, տարած-
վում ե նրանց գյուղը, տարածվում են նրանց
գաշտերն ու յայլաները:

Այստեղ աճում, ամրանում է Զոլավրի
կոյտնությունը:

Մի որ, վոչ հեռու անցյալում, նրանք
սրաի խորը կոկիծով կարգացին բոլցեփիկան
անվեհեր մարտիկի սպանության մասին, նը-
րանց սիրտը պատեց անսահման տիրությու-
նը, փոթորկվեցին նրանց հոգիներն ինչպես
կատաղած, ալեկոծ Սևանը, դաժան ատելու-
թյամբ լցվեցին նրանց սրտերը դասակարգա-
յին թշնամու հանդես և իրենց առաջին պա-
տասխանը թշնամուն յեղավ՝ կոլտնտեսության
վերանվանումը սիրելի Միլոնիչ Կիրավի անու-
նով:

ՅԵՐՄԱՆԻ ՎԱՐԻՀ ՀԱՄԲԱՐՃՈՒՄ Սահակյա-

Ել հաղթահարելով վիշտը, վորպես պատասխան թշնամուն, ե՛լ ավելի անձնուրաց սկսեց աշխատել ֆերմայում անամնափահության գուլտուրական ձևերը կիրառելու համար:

Արդեն նա վճռական բեկում եր ստեղծել
անասնապահության վերելքի գործում :

Դրա համար ե, վոր Զոլաքարի կոյտըն-
տեսականները նրան ասացին.

— Գնա՛ Մոնկվա, մասնակցի՛ր կոլտըն-սականների համագումարին:

Յեկ նա այժմ, Մոսկվա մեկնելուց առաջ,
նստած կուսակցության կենտրոնական շտա-
բում, պատմում ե իրենց կոլտնտեսության նր-
վաճռմների մասին, պատմում ե համարձակ,
կարծ:

— 1933 թվին մենք անասունների խոչոր կորուստ եյինք ունեցել։ Այս տարի շնորհիվ բարեխղիճ խնամքի և աշխատանքի լավ կազմակերպման, անհամեմատ նվազեց կորուստների թիվը։ 1934 թվին ֆերմայի 475 վոչսարքից՝ անհետ և մինչև որս հասցրել ենք 481 գառ։ Շնորհիվ գիշերային արոտի կազմակերպման շատացավ անասունների կաթն ու քաշը։

Ձերմայի վարիչ Սահակյանը պատմում է
և դաշտավարության ասպարիզում ձեռք բեր-
ված նվաճումների մասին:

— Մենք յերեք անգամ ջրեցինք հողը,
քաղհանեցինք պատճեռը զարերից մաքրինք ու

պարարտացը ինք, վորի հետևանքով 1934 թվ-
կին բերքատվությունը կրկնակի բարձրաց-
րինք: Դաշտերից հավաքեցինք 219 ցենսներ
հասկ, վորով ապահովեցինք 1935 թվի ցանքի
սերմացվի 50 տոկոսը: Կոլտնտեսության այդ
նվաճումները աեսնելով բերքի բաշխումից հե-
տո, 95 աշխատավոր մենատեսներ մտան կոլ-
տնտեսություն:

Նա նստել է կրեմի մեծ դահլիճում, իր
հոգու մեջ բանտել հորդող բերկրանքն ու յեր-
ջանկությունը ու անկուշտ դիտում և մեծ ա-
ռաջնորդին:

Նրան մի անզուսակ ցանկություն քաշում և
գեղի նախագահության սեղանը — դեպի Ստա-
լինը: Նա ուրախությունից բարախող սրտով,
հեռվից հետեւում և մեծ առաջնորդի յուրա-
քանչյուր չարժումին:

Ապա նա մտքում դասավորում է իր յե-
լույթը —

«Սիրելի ընկ. Ստալին, մենք լծվել ենք, —
մեզ գեղի յերջանկություն տանող՝ քո ցուցու-
մի կենսագործմանը:

Ահա 1934 թվին մենք 600 գլուխ վոչխարհ
համար կառուցեցինք մի մեծ նոր փարախ:
սարում կառուցեցինք յերեք գոմ. այս տարի
պիտի կառուցենք ևս մի գոմ՝ 100 կովի Հա-
մար և մի փարախ 500 վոչխարի համար: Մենք

կենսագործեցինք քո պահանջը և 34 թիվը
դարձրինք բեկման տարի՝ անասնաբուծության
գարգացման գործում:

Մեր կոլտնտեսականներն անցյալ տարվա
մի կիլո 400 գրամ հացահատիկի փոխարեն,
1934 թվին ստացան 5 կիլո 750 գրամ հացա-
հատիկ, մի կիլո կարտոֆիլ, 73 գրամ յուզ,
105 գրամ պանիր, բուրդ, ձեթ և այլն: 15
կոլտնտեսականներ, նոր լուսավոր շենքեր են
կառուցել, իսկ 20-ն ել պատրաստվում են կա-
ռուցել: Գյուղի 575 տնտեսությունները ամ-
բողջովին ընդգրկված են կոլտնտեսության
մեջ»:

Սահակյան Համբարձումը սթափիլեց ծա-
փերի տարափից: Ծափահարում եյին դեկո-
ցող ընկ. Յակովյանին:

Նա ուշքը բևեռեց զեկուցմանը:

«Սոցիալիզմը հեքյարից իրականություն
դարձած այն հնարավորությունն եւ, — բառը
եր նա — վոր տարեկան՝ միմիայն 1934 թվա-
կանին՝ 270 հազար շարքային գյալացի պա-
տաճիներ դառան տրակտորիստներ, 21 հազար
հոգի դառան կոմբայնավարներ, 246 հազար
հոգի սովորին դաշտավարական բրիգադիրնե-
րի գործը և 180 հազար հոգի սովորին անա-
նառուծական բրիգադիրների գործը:

Սոցիալիզմը հնարավությունն եւ կու-
սակցության կամքով գալ այսուղ՝ կրեմի
պալատը՝ կառավարության հետ և ժողովրդի

առաջնորդ՝ ընկ. Ստալինի հետ, քննարկելու կոլտնտեսային կյանքի կառուցման հիմքերը:»:

Նա ծափահարեց կոլտնտեսականների հետ, ծափահարեց սիրելի Ստալինին, ծափահարեց ամբողջ Հոգով ու եներգիայով:


Արյունը նոր ուժով սկսեց շրջան անել Նրա մարմնով, նրա կուրծքը բարձրացավ և բարախեց ավելի ուժգին:

«Վերջապես ացիալիզմը— հնչում ե նրա ականջներին— դուռն ե դեպի կոլտուրան, դեպի ելեկտրական լույսը, դեպի մրգատուծառերը մեր գյուղերի փողոցներում, դեպի քերքը, դեպի ռադիոն, հեծանիվը, կինոն»:

Համբարձումը մի քանի լուսե մոռացավ և իրեն շրջապատող ընկերներին, և' իր կրեմլի պարատում լինելը, և' զեկուցման վերջին ծափահարության մասնակցելը: Նրա աչքի առաջ տարածվում ելին Սևանի կապուտակ ջրերը, լճի յեղերքում սպիտակ, գեղեցիկ տները, վորոնք նայում ելին Սևանի սպիտակաբաշ արշավող ալիքներին: Նրա աչքի առաջ ուրվագծվում եր մի գեղեցիկ պարտեզ, խիտ ծառերով ու ծաղիկներով, ասֆալտե մի լայն շոսսե, վորը յերկարում եր մինչև հին Զոլաքարը: Նրա աչքերի առաջից թեթևորեն սահում ելին ելեկտրական լույսի շղթաները, վորոնք գալիս ելին Սևան-Զանգվիլ լուսառատ հիղը-կայաններից և լուսավորում ելին ծովեղըյա

Հանգստյան տնից, քաղաքային պարկից ու Հրապարակից մինչև մեխանիզացիայի յենթարկված գոմերը: Նրա սրտում ուժեղ տպավորվեց և անսահման ուրախություն պատճառուց կենինի և Ստալինի այն կիսանդիրները, վորոնց լուսավորում եր մեծ լուսարձակը՝ ծովեղըյա այցու մեջ:

Նրա աչքի առաջ ուրվագծվում եր վաղված մեծ Զոլաքարը՝ Սևանի կապուտակ ջրերի գիմաց. Նրա աչքերի առաջից կինո ժապավենի նման սահում ելին ցեղական վոչխարների մեծ հոտերը, Զոլաքարի կանաչ սարալանջերում:



ԼԱՎԿԱՐԻ ԿԱՄՈՒՅՏ ԼԱՆՁԵՐՈՒՄ

Բուղյոննին՝ հպարտ, սպիտակավուն ծիռով վրա նստած՝ Լալվարի ստորոտներով սահում և Ռոռուտ:

— Հրաշք ե, վոր նա ապրում ե: Ուզում էյին վողջ վողջ այրել մարագի մեջ: Սակայն, մենք՝ կոմունարներս հասանք ճիշտ ժամանակին ու փրկեցինք նրա կյանքը: Են վախտը նա չառ լավ աշխատող եր:

Ցես լսում եյի վոչ աշուղական պատմը՝ վածքներ՝ Լալվարում սպանվող յերկու սիրահարների՝ Ալվարդի և Կարոյի մասին, վոչ

մանկական հին հեքիաթներ վերջին ըռպեցում հրաշքով մահվանից ազատված հերոսների մասին, այլ այն, ինչ վոր պատահել եր սըրանից ընդամենը չորս տարի առաջ:

Համայնական դաշտերի հարսառության մեջ, վարսակի բարձրացողում արտի մեծուղում իր ամբողջ հասակով խրոխտ կանգնած՝ Մացակը թերթում եր «Համատարածի» փորթորկալի որերի մի քանի եջերը...

Իսկ Լալվարի լանջերում, հեռավոր հորիզոններում, մայրամուտից հետո՝ խտանում, թանձրանում եր իրիկնային լուրթ մշուշ:

Բուղյոննին անհետացավ ջրաղացը շրջապատող մուգ-կանաչ ծառերի մեջ:

Ստեփանավանի շրջանում հանրածանոթ Բուղյոննին Ուռուտի կոլտնտեսության նախադաշ՝ Մուկուչն եր, վորը գաղաղած թշնամու ճիրաններից հազիվ եր ազատվել Ուռուտ հասնող կոմունարների կողմից:

Նա այնքան նման եր Բուղյոննուն, մանականդ իր թավ բեկներով:

2

Արդեն հեռվից կարմրին են տալիս, Ուռուտի կոլտնտեսության ապրանքային ֆերմայի, նորակառուց գոմերը: Լսվում ե մեքենատրակտորային կայանի սիլոսահատ ու կալսիչ մեքենաների զրնդուն յերգը:

Մեր առաջը, վորպես մեծ յերանգապնակ՝ փովել և ծաղկադաշտը:

Լոռեցու մեծ փափախների նման՝ բարձրացել են խոտի ու ցորենի դեղերը: Կալսող մեքենայի յերախին կուլ են գնում ցորենի խրձերը, աղբյուրի նման հոսում են մաքուր ցորենի հատիկները: Սիլոսահատ մեքենան՝ կտրատում, փշուր-փշուր ե անփում արևածաղիկը, պատրաստում ե անասունների ձմեռացին կերը:

— Անասունի կաթը լեզվի ծայրին ե, ինչ տաս նա յել կստանաս, — ասում ե Փերմայի վարիչը:

— Իսկ մեզ մոտ մի քիչ թերագնահատում են սիլուր, — նկատում ե յերիտասարդ կովապահէը:

Սկսվում ե բուռն վիճարանություն յերիտասարդների և ծերերի միջի:

— Մեր բոլոր կովերն արդեն տեղափորված են նոր գոմերում: Վերջերս ավարտվեց նույնպես ցուլանոցի կառուցումը: Յուլերին պետք ե առանձին պահել կովերից — ավելացնում ե մի տավարած:

Կառուցված ե նաև մի մեծ կաթսա, չուր տաքացնելու համար՝ վորով հնարավոր կլինի մաքրել կովերի կուրծը կթից առաջ:

Այս բոլորից հետո, այժմ արդեն դասակարգին թշնամին չի խոսում այն մասին, վոր «պետությունը կոլխոզֆերմայի անվան

տակ տավարը թոփ ե անում՝ տանելու համար»:

3

Վարսակի արտի յետեից, ժպտում են վուկեղուխ, սեվաչյա արևածաղիկները: Մեր ձիերը խրխնջալով բարձրանում են լեռան լանջով դեպի վեր ու վեր: Մի թեթև սարսուռ ե անցնում հասուն արտի վրայով. հասկերը սվավում են քաղցր դողով, սարյակները սուր ճչում են ու խուճապով փախչում մեր առաջից՝ հասկերի միջից:

Ամպերի արանքից, լուսե տասնյակ արահետներ են ձգվում կանաչի վրա: Այդ լուսաւեր շավիղները գույների մի լայն բազմերանդ գոտի յեն ստեղծում մեր առաջ:

Հորդառատ անձրեից հետո, յեղանակը պարզվում ե. նորից ժպտում ե յերկնային կապույտը: Նորից բարձր ե ճախրում լոռվա՝ այս սեղ լեռների արծիվը:

Ուռուտի թիկունքից՝ Լալվարի վստներից՝ սկսում ե դեպի վեր ու վեր ծծվել և քայլ առ քայլ նահանջել ամպերի սպիտակ քուլաներն ու ամփոփվել դեպի լեռան գագաթը, բաց առնելով մուգ կանաչ լեռների մի նոր թուվչություն, կանաչի մի նոր թարմություն: Այս լեռներում արածում են՝ Ուռուտի Փերմայի կովերը:

Սարում առաջինը հանդիպում ենք սակագարած Գեվորգ Պետրոսյանին՝ ՅԱՊՈՒԻՆ:

Այս տարին նա հրաժարվել է անասունները արածացնելու հին ձևից, արոտների գիշատիչ ռդտագործումից, յերբ անասուններն ամբողջ արոտները՝ մի ծայրից մյուսը՝ մի որոշմ վոտնակոխ ելին անում, փչացնելով պճող կանչը: Ֆերմայի վարիչի խորհրդով, նա արոտները բաժանել է չորս մասի, և կովերին հերթականորեն արածացնում է այդ արոտներում: Այդ հնարավորություն է տալիս, վոր չոդտագործովող արոտները լավ աճեն ու կովերը կուշտ կարողանան ուտել առանց յերկար թափառելու:

Շնորհիվ այս միջոցառման՝ կովերի կաթնատվությունն ավելացել է զգալի չափով— 1933 թվի 3,3 ցենտներից միջին կաթնատվությունը 1934 թվին հասել է 9-ը ցենտների:

Յապոնիա խնդրում եմ ցույց տալ իրենց ամենակաթնատու կովին:

— Մեր ամենաշատ կաթ տվող կովը՝ «Կուլլան» է: Նա վեց ամսում տվեց 17,5 ցենտներ կաթ: «Կաշտանը» և «Սուրուտկեն» ել տվեցին 15-ական ցենտներ:

— Մեր տեղական կովերից ել մի քանիսն հետ չեն մնում ցեղական կովերից. «Հանումն» ու «Մարալը» ևս վեց ամսում 15-ական ցենտներ կաթ տվեցին— շարունակում է Փերմայի վարիչը:

Այսուեղ կովերից մի քիչ հեռու, արածում են ցուլերը:

Մետիսացման գործը պլանավորելու նրա պատակով, ցուլերին ամրացրել են առանձին կովեր. ամենակաթնատու կովին պետք է բեղմնավորի ավելի բարձր ցեղական արյուն ունեցող միևնույն ցեղի ցուլը:

Նրանք հասկացել են, վոր անասունների ցեղի ազնվացման գործը հանդիսանում է յուրաքանչյուր Փերմայի աշխատանքի կարևորագույն բնագավառը:



Մյուս սարալանջում, ձորի մյուս յեղերքում, ուրախ, անգուստ վոստումներ են կատարում հորթերը:

Մի հորթ փորձում է անցնել ձորը, գնալ մոր մոտ: Արածելիս նրա միտն է ընկել մոր համեղ կաթը:

Սակայն հորթապահը վազում է, կարում շեկ հորթի առաջը և հետ վերադարձնում իր ընկերների մոտ:

Քրանած, աչքերում ժպիտը վառ՝ «Մաշկային», «Սոնային» ձայն տալով գալիս է հորթապահը:

— Նրա սիրտը ցավում է յուրաքանչյուր հորթի համար, նա յուրաքանչյուրի մասին ժտածում է և այնպես հոգ տանում, այնպես զուրգուրում, ինչպես իր սեփական զավակներին— ծանոթացնում է Գեորգը:

Մուկուչը 5 տարվա անտանապահ է, 3

տարվա հորթապահ։ Շնորհիվ լավ խնամքի չա գերակատարել ե հորթերի աճի պլանը։ Ֆերմայում 8-ը ամսական հորթի միջին քաշը անցյալ տարի յեղել ե՝ 65 կիլո, իսկ 1934 թվին՝ 102 կիլո։ Մուկուչի արածացրած հորթերի միջին քաշը հասնում է 100 կիլոյի։ «Մաշկան» 80 կիլոյի փոխարեն կշռում է 200 կիլո, «Պարոնը» 185 կիլո, «Սոնան» 157 կիլո։

— Յերբ լուսաստղը դեռ յերկնքում փայլում և նա իր հորթերը դուրս է բերում արածացնելու, դրա համար ել Մուկուչի հորթերը չաղ են— ավելացնում ե դեռգը։

5

«Միայն նրան կարելի յե կոլտնտեսային տավարած և հովիվ ընդունել, ով տիրապետում է գոռտեխնիկական և անասնաբուժական մինիմումին» («Պրավդա»)։

Այս ինչու, յերբ կապույտը փռվում է ամրող լեռնալանջերով ու թանձրանում, սեվանում գոմերում, լամպի աղոտ լույսի տակ, գերդն անց եր կացնում զոռտեխնիկայի տիրապետման լուսակի պարապմունքը, անասնապահին, հորթապահին և կովկեթին սովորեցնում եր՝ հասկանալ անասունի լեզուն, տիրապետել կուլտուրական սոցիալիստական անասնաբուժության տեխնիկային։

Չե՞ վոր առանց դրան հնարավոր չե անառունների խնամքի, աճեցման, ցեղի ազնվաց-

ման ու մթերատվության բարձրացման բնագավառում ևս հասնել ու անցնել կապիտալիստական առաջավոր անասնապահական յերկրներին՝ Շվեյցարիային, Հոլանդիային ու Դանիային։

6

Նա իր ընկերների հետ բարձրացավ դեպի վեր, ելի բարձրացավ, հետո իջավ խորձութը, առատ քրտինքը ցուցամատի կողքովը կաթեցը զետին, ապա պինդ սեղմեց Համդաչիմանի Փերմայի վարիչ՝ Զավեն Քոչարյանի ձեռքը։

Ստեփանավանի հարվածային անասնապահների հետ, Ուսումնից Գեորգն ել յեկել եր առաջավորների հետ փորձի փոխանակում ունենալու համար։

Սարում նա մտավ կարմիր անկյուն, մըտավ հորթանոց, մտավ անասնապահների սենյակները։

Նա մի շարք ցուցումներ տվեց «ինֆեկցիոն վիժում» հիվանդության առաջն առնելու համար, ցույց տվեց ցուլերի թարախակալած պորտերը, մի շարք նկատողություններ արեց, ապա գրպանից հանեց փոքրիկ բլոկնոտը, դրեց և նորից գրպանը դրեց։

Նա թափանցում եր աշխատանքի կազմակերպման մանրութների մեջ, քննում, ուսումնասիրում՝ իր մոտ նշում։

Յեկ յերբ նա Ռւսուսում նորից բաց արհց բլոկնոտը՝ զեկուցման պատճառասավելու համար, այնտեղ գրված էլին հետեւալ խնդիրը—

ա) Սարում՝ շարժական հորթանոցներ կառ ոռուցելու խնդիրը:

բ) Անասնապահների համար սարում՝ շարժական տներ կառուցելու խնդիրը:

գ) Սարում՝ շարժական կարմիր անկյուն, դրականություն և պատեֆոն ունենալու խրնդիրը:

դ) Գոմում՝ պարզ մեխանիզացիա անցկացնելու խնդիրը:

ե) Գոմում՝ ջուր, միզատար առուներ, առանձին ծննդարան, հորթանոց, մեկուսարան, միզամրաներ ունենալու խնդիրը:

7

Յերեկ կոմունարներն ազատեցին նրան: Յերեկ կուլտիւրային կոփնչ եր, բանդիքական յելույթներ: Յերեկ վճռական մարտեր եր մզվում կուլտիւթյունը վերջնականապես արմատախիլ անելու համար:


Այդ պայքարում մենք հաղթեցինք: Բայց ողայքարը շարունակվում է և՛ թշնամու դեմ և՛ ընության:

Այսոր նոր մարտեր կան: Մարտեր՝ կուտընտեսական գոմում, արպյան արոտներում, Լալվարի կապույտ լանջերում:

Այսոր սոցիալիզմի մարտերի մեծ առաջնորդը՝ միլիոններին կանչում ե անասնաբուծությունը վեր, ու ավելի վեր բարձրացնելու համար:

Այսոր պետք ե մարտնչել զոռուեխնիկայի բարձրունքները նվաճելու համար, կոլտնտեսական, ունեոր կյանքի համար:

Մարտնչել այնպես, ինչպես կոմունարը ռազմի գաշտում:



ՄԵԾ ՈՒԺԸ

Մայիսի մեկի անվան հյուրանոցում նա պառկել է գեղեցիկ, ելեկտրական լույսերով լուսավորված սենյակում, ձյունի նման սպիտակ անկողնի մեջ ու հանգստանում է: Նա աչքերը հառել է գեղակերտ առաստաղին, ու սլացել է հեռուն, խորասուղվել արդեն հեռավոր դարձած անցյալի հիշողությունների մեջ: Դրա համար նա լուռ է ու մենակ իր անիծյալ անցյալի հետ:

— Յես— մտածում է նա, — յեղել եմ կուլակային գյուղի ամենադժբախտ մարդը, յես յեղել եմ անտուն և անտեր չորան, յեղել եմ կյանքի խոր հատակում, ինձ համար հառագատ են յեղել քաղցր, վիշտն ու զրկանքը, ինձ 20 տարի հալածել ե կուլակային ստրկությունը, 20 տարի կիսամերկ մարմինս ծեծել ե Ալագյաղի բքաշունչ քամին, ծեծել ե անձրեն ու կարկուտը:

Ապա, յերեսի մոայլի վրա ուրվագծվում է մի թեթև, սահուն ժպիտ, այնքան թեթև, ինչպես մանկան առաջին ժպիտը. ու նա զըննում է իր շուրջը, դիտում է իրականությունը:

Զե, նա ինքը իսկապես գտնվում է մեծ մայրաքաղաքում, այն քաղաքում, վորի վրա իրենց հայացքներն են հառել մեր յերկրի՝ սոցիալիզմ կառուցող միլիոնները, իրենց հայացքներն են հառել կապիտալի ճիրաններում՝ արյունաքամ յեղած միլիոնները, սովորական թյան դատապարտված՝ դադութային ստրուկները:

Մոսկվա:

Կրեմլ:

Ստալին:

ԶԵ՛, այդ չոշափելի իրականություն է:

Աղյամանցի անկուսակցական հովիվ՝ Սրապ Գրիգորյանը հիշում է վաղուց, չառվաղուց իրենց դյուզի քյոխվի պատմածը՝ Մոսկվայի, ցարերի մեծ քաղաքի հրաշքային գեղեցկությունների, վիթխարի տների, սլացող տրամվայների, ավտոների ու այլ հազար մի հրաշքների մասին:

Այն ժամանակ նա մտքովն ել չեր անցկացրել, վոր կարող է ինքը դառնալ մի նոր գյուղի տերը, վեր բարձրանալ հատակից՝ ու հինգ որ և գիշեր գնալ գնացքով, հասնել հըրաշքների մեծ քաղաքը:

Նրա մտքում Մոսկվան մնացել եր մի անհասանելի, աննյութական յերազ, վորը մատչելի յեր միայն պրիստավին ու տոհգտրականին:

Նո իք գրպանից հանում ե մի գրություն, վորի մի պատճենը Յերեանում թողել եր կարդալու ընկ. Գուլոյանին՝ Մոսկվա մեկնելուց առաջ:

Սրապը չորսորդ անդամ կարգում ե՝ «Հարվածային կոլտնտեսականների համամիութենական յերկրորդ համագումարին մասնակցելու համար,— գրում ե թաղինի կուսշըջկոմը, — մեր շրջանից ուղարկում ենք անկուսակցական հովիվ՝ Սրապ Գրիգորյանին:

Ընկ. Սրապ Գրիգորյանը Աղյամանի կուտրենտեսության հիմնառջիրներից մեկն ե, սոցիալական դրությամբ՝ չքավոր գյուղացի, մինչև կոլտնտեսություն մտնելը, գյուղում յեղել ե հովիվ: 1929 թվից մինչև 1931 թիվը կատարել ե՝ գյուղխորհրդի նախագահի պարտականություն, կոլտնտեսություն մըտնելուց մինչև որս կոլտնտեսության մէջ կատարել ե՝ կոլտնտեսական ավագ հովիվի պարտականությունը:

Ակամիվ և բարեխիղմ աշխատանքի համար, ստացել ե հարվածայնի կոչում և պարզեվատըրվել ե շրջգործկոմի պատվո գրով ու կուտրենտեսության կողմից՝ գառով»:

Սակայն, ամենամեծ ու ամենաթանկագին

պարզեր, վոր նո իր կյանքումն առաջին անգամ ստացավ, դա կազմեր Մոսկվա գնալու մանդատը նվաճելն եր: Նո իսկապես պայքարով նվաճեց այդ մանդատը, քանի վոր նո չըխընայեց իր կյանքը, իր ամբողջ եներգիան կոլտնտեսական գյուղի հաղթանակի համար՝ կուլակի ու գաշնակի գեմ մղվող կատաղի պայքարում:

Այդ պայքարի փայլուն հանրագումարների կոնսպեկտը նո մի անդամ ել ե կարգում—

«Աղյամանի կոլտնտեսությունը, կիբառելով առաջին հարվածային կոլտնտեսական հարազատ Ստալինի ցուցումները, 1934 թ. այնքան բերք ստացավ, այնքան հարստացավ, վոր կոլտնտեսությունը պետությանը յերկուտարվա պարտքը տալուց և 1934 թվի պետական բոլոր պարտավորությունները լրիվ կատարելուց հետո՝ աշխորին բաժանեց 7 կիլոհացատիկ, 35 գրամ յուղ, 137 գրամ պանիր, և այլն: Մինչդեռ 1933 թ. Աղյուսանի կոլտնտեսականներն աշխորին ստացել ելին միայն 3 կիլո 800 գրամ հացահատիկ:

1933 թ. կոլտնտեսության գառների 28 տոկոսը սատկեց, իսկ 1934 թ., չնորհիվ բարեխիղմ խնամքի՝ սատկեց միայն յերկուդառ:

Ապա նո ավելացնում ե՝ «Յես նախկին անտեր, չքավոր չորան Սրապը, չնորհիվ կոլտնտեսական աղնիվ աշ-

խատանքի, արդեն ունեոր եմ դարձել։ Յես
կյանքում առաջին անգամ, այս տարի, ստա-
ցա այնքան հացահատիկ, վոր ինձ լիովին կը-
րավարարի առնվազն յերկու տարի»։

* * *

Նա անսահման կարոտով լի ու հափշտա-
կությամբ, դիտում ե նախագահության սեղա-
նի առաջ կանգնած այն մեծագույն մարդուն,
վորի անունն ամեն որ ու ամեն ըոպե լսել ե.
վորին յերազել ե տեսնել մոտիկից, մոտիկից
ընդգրկել նրա մեծությունն ու վեհությունը,
վորը նրան կյանքի հատակից բարձրացրել ե
ունեվորության ու յերջանիկ կյանքի շեմքին։

Նրա աչքի առաջ բարձրանում ե մեծ ո-
հարազատ Ստալինը, բարձրանում ե իր կարո-
տի ու սիրո ամբողջ ուժով։

Սրապի սիրտն ուժեղ բարախում ե ուրա-
խությունից ու հուզմունքից։ Նա դեռ հեռվից
զգում ե մեծ մարդու այնքա՞ն ջերմ, այնքա՞ն
դորովալի վերաբերմունքը դեպի մարդու,
հանդեպ սոցիալիզմ՝ կառուցող միլիոնները՝
հանդեպ իրեն։

Ադյամանից՝ կրեմլ։ Զորան Սրապի՝ ամ-
բողջ աշխարհի աշխատավորության դեկավար
Ստալինի մոտ, Ստալինի հետ միասին։

Սրապի հոգին բարձրանում ե այնպես,
ինչպես իր սեփական Ալագյազի զույգ բար-
ձունքները՝ յերկնային կապույտ անհունու-
թյան մեջ։

Սրապը դիտում ե ընկ. Ստալինին, թե նա
ինչպես մտերմորեն սեղմում ե իրեն շրջապա-
տող կոլտնտեսականների ձեռքը, նրանց հետ
խոսում ե մտերմորեն, նրանց լսում ե մեծ
դեկավարի սիրով ու ջերմությամբ։

Ապա, նա նոր մարտերի և նոր հաղթանակ-
ների ուժով ներշնչված, լսում ե ընկ. Յակով-
լեվին։

«Սոցիալիզմը, վորն իրականացնում ենք
մենք՝ յերկրում կոլեկտիվ տնտեսաձեւի հիման
վրա՝ թռչունների, բանջարեղենի և ամեն տե-
սակ այլ մթերքների առատություն ե։

Սոցիալիզմը դուռն ե դեպի կուլտուրան։

Սրապը ուշադրությամբ լսում ե ընկ. Յա-
կովլեվի՝ զեկուցման վերջում ճապոնական
«Ճոկիո Նիցի-Նիցի» թերթից մեջ բերած ցի-
տատը, այն մասին, վոր «Ճոխոկու շրջանի
դրությունը սոսկալի յէ։ Մահվան դուռը հա-
սած գյուղացիների թիվը հասնում ե՝ 700,000
հոգու։ Մայրերը հյուծվել են և մահանում
են։ Դպրոցականներն որ ավուր ուշաթափվում
են դպրոցներում՝ հյուծումից։ Գյուղացիները
չեն կարողանում բրինձ գնել և վաճառում են
իրենց աղջիկներին։ Մարդու սիրտը դադա-
րում ե բարախելուց, յերբ տեսնում ե այն
սոսկալի կարիքը, վորին մատնվել ե գյուղա-
ցիությունը»։

Կարձ՝ յերկու աշխարհ՝ յերկու կյանք—
բարձրունքներ և հատակ։

Սրապի հոդին հուզվում է, ալեկոծվում,
փռթորկվում:

Չե՛, վոր նա յել յերկար տարիներ ապրել
ե կիսակուշտ:

Նրա մտապատկերում յերկար կանգնած
են մնում հյուծված մայրերն ու վաճառվող
աղջիկները:

— Այդ բոլորի մասին պետք ե պատմել
գյուղում, — մտածում ե նա:

— Բնկերնե՛ր, ահա այն խնդիրները, վոր
ընկ. Ստալինի հետ միասին մենք քննեցինք
համագումարում — շարունակում ե Սրապը իր
զեկուցումը, — : Այդ բոլոր խնդիրները ամ-
փոփլած են մեր նոր, ստալինյան կանոնա-
դրության մեջ: Այդտեղ դրված ե աշխարհու-
մըս գյուղական միակ յերջանիկ, կուլտուրա-
կան ունեոր կյանքի որենքը, — կոլտնտեսա-
կան կյանքի որենքը: Մեր խնդիրն ե այդ ո-
րենքը հասկանալի գարձնել ամեն մի կոլտն-
տեսականի ու ամեն մի մենատնտեսի, մենա-
տընտեսին ցույց տալ միակ ճիշտ ճանապար-
հը:


Մեկ ել ընկերնե՛ր այն, վոր լավ կազմա-
կերպենք գարնանացանն ու անասունների ծի-
նը, Ագյամանը գարձնենք թալինի շրջանի ա-
մենառաջավոր կոլտնտեսությունը, վորից
որինակ վերցնեն մյուս կոլտնտեսություննե-
րը:

Վերջապես, ընկերնե՛ր, զեկուցմանս վեր-
ջում, յես ձեզ մի՛ անդամ ել ուղում եմ հիշեց-
նել մեր հարազատ, մեծ Ստալինի այն խոս-
քերը, վոր «կոլտնտեսականներն ունեն ա՛յն ա-
մենը, ինչ վոր հարկավոր ե ունեվոր կյանք
վարելու համար: Նրանց պետք ե միայն մի
բան ես՝ աղնվորեն աշխատել կոլտնտեսության
մեջ, պահպանել կոլտնտեսային գույքը»:

Աշխարհի ամենայերջանիկ կյանքի հաղ-
թանակին հաստատ համոզված, Սրապը վեր-
ջացնում ե իր խոսքը՝ կյանքումն առաջին ան-
գամ զգալով այն մեծ ուժը, վոր յեռ ե գալիս
իր ամբողջ յերակներում, այն մեծ ուժը, վոր
կոլտնտեսական կարգերը առաջ քաշեցին ու
տվեցին նոր մարդուն՝ կոլտնտեսական գլո-
ղացուն:



ՀՀ Ազգային գրադարան



NL0310068

36709

ԳԻՆԸ 60 ԿՈՄ.

СТ. КУРТИКЯН
НА АЛЬПИЙСКИХ
ПАСТБИЩАХ

Гиз. ССР Армении. Эривань 1935 г.